

# Որքերու Խնամակալութեան Տասնամեակի Տօնակատարման Բացումին

Ի սենաշուք պարոն Նախագահ եւ Համեստափայլ Առաջին տիկին Հայաստանի Հանրապետութեան, Վեհափառ Տէր, Պատուարժան հիւրեր, հայրենակիցներ եւ շատ սիրելի պատանհներ.

ՀՕՍ-ի համասփիւռ ընտանիքին ամուսնով, խոր յուզումով եւ ուրախութեամբ կ'ողջունենք բոլորիդներկայութիւնը այստեղ. Կազմակերպութեանս համահայկական կարելոր մէկ ծրագրի տասնամեակին առթիւ: Ծրագիրը, ինքնին, Հայրենիք-Սփիւռք աշխատանքներու համադրման արդիւնաւետ մէկ իրականացումն է՝ մարդասիրական մարզի մէջ: Սակայն, այս ծրագրի տասնամեայ յաջողութիւնը նշելէ աւելի, եկած ենք այսօր տօնախմբելու անոր խորհրդանշանական բնոյթը: Եկած ենք ծափահարելու եւ գովաբանելու ծրագրին հետ առնչուող մատուցուած սերունդին վերապրելու կամքն ու կողովը, բոլորիս ծանօթ դժուարինպայմաններու տակ:

Եկած ենք ըսելու այս պատանհներուն եւ երեխաներուն՝ թէ միւթական այն համեստ օժանդակութիւնը որ կը փոխանցուի ձեզի, սիրելիներ՛ր, պզտիկ մէկ արտայայտութիւնն է, ջնջի՛ն, համեմատած մեր անսակարկ սիրոյն եւ զուրգուրանքին ձեր հանդէպ. դուք մեր հոգածութեան եւ ուշադրութեան առարկայ եք մի՛շտ, մեր սրտերուն եւ մտքերուն մէջ, մի՛շտ: Հայրենիքէն հեռու, սակայն մենք միշտ ձեզ հետ ենք: Որպէս մարդասիրական կազմակերպութիւն, մենք պիտի շարունակենք մեր ջանքերը՝ բարելաւելու ձեր կեանքի պայմանները եւ



պաշտպանելու ձեր մարդկային իրաւունքները: Դու՛ք եք մեր յոյսը, մեր ապագան, աշխարհի՛ ապագան:

Այս առթիւ, կուգանք նաեւ երախտագիտութեան ու զնահատանքի մեր զգացումները արտայայտելու մեր բոլոր՝ խնամակալներուն: Աշխարհի չորս ծագերէն, որպէս հարազատ ու արժանաւոր զաւակները եղեռնէն վերապրած սերունդներու, անոնք, ՀՕՍ-ի միջոցաւ, օգնութեան ձեռք երկարեցին այս մատուցուած վերապրողներուն: Վարձքերնիդ կատար՛ր, բոլորի՛դ — մերկայ ու բացակայ — սիրելի խնամակալներ:

Այժմ, երախտագիտական ու շնորհակալական մասնաւոր՝ խօսք ունին Ձեզի՛, պարոն Նախագահ, որովհետեւ անկարելի պիտի ըլլար այս յիշատակելի օրը իրականացնել: Արդարեւ, առա՛նց Ձեր գլխաւորած պետական վարչամեքենային, նախարարներուն — յատկապէս Պաշտպանութեան նախարար՝ պարոն Սերժ Սարգսեանին — եւ բազմաթիւ հայրենակիցներու անսակարկ ու սրտաբոլիս օժանդակութեան կարելի պիտի չըլլար լաւապէս տօնախմբել մեր թանկագին երեխաներուն ու պատանհներուն յիշատակելի այս օրը:

Սրտանց շնորհակալութիւններ բոլորի՛դ. անգամ մե ես, բարի՛ եք եկած, բարի վայելում ու բարի վերադարձ ձեր տունները:

